

պատած պալատականներով: Նոյնպէս նկարուած են որսորդութիւններ, որոնց մէջ մասնակցել են կանայք, որոնք հեծած ձիերի վրայ ընկած են առիւծների եւ վագրների ետեւից գեղարդները ձեռքներին: Այդ բոլորը հին պատմագիրների ստորագրութիւնների հետ համաձայն են: Իսկ եթէ իշխանները չէին ցանկանում անտառները եւ լեռները որսի երթալու, այն ժամանակ կարճ լինէր որսորդութիւն անել պարտէզներում, (парк), որոնք կից էին պալատներին: Սակայն սորա մասին ի շարտ այսոց առուած է եւ Ղանիէլի մարգարէութեան մէջ: Այդ շրջապատ անտառների մէջ (парк) առանձին վանդակներով պահուած են առիւծներ, գէպի վանդակները կրկէսն էր, որի մուտքը պահուած էր զինւորների, աջ ձեռքին գեղարդ, իսկ ձախ ձեռքին մեծ շներ՝ շղթաներով: Վանդակների մօտ կար արկղ, որի ձեւը փոքրիկ գոնուած է Նինուէում, այդ արկղի մէջ տեղաւորուած էր մարդ, որ բաց էր անում վանդակի դռները, երբ հարկաւոր լինէր անտառները բաց թողնել կրկէսի մէջ: Աւրեմն գոնուած քանդակագործ իրերով ծանօթանում են այն ժամանակուայ սովորութիւնների եւ Ասորոց պալատների շքեղութիւնների հետ: Իսկ բազմաթիւ բեւեռաձեւ գրերը, արգէն մասամբ բացատրուած լինելով, տալիս են այնպիսի պամօքանական հարուստ նիւթ, որ փորուածքների վրայ արած աշխատանքն ու ծախքը վարձատրված են աւելորդութեամբ:

(Թարգմ.)

Զ. Տ. Զատարեան

ԹԻՒՐ ԳԱՂԱՓԱՐ

ՀԱՅ ԳՊՐՈՅՆԱՐԻ ՄԵՍԻՆ.

Բարին՝ չար եւ չարը՝ բարի անուանել ու համբաւել յատուկ է միմիայն այնպիսի անձանց, որոնք կամ իսկապէս են՝ եւ կամ դիպրոս-բեւեռ են՝ կամ յամառ-բեւեռ՝ եւ կամ մի որպէս եւ եղէ կրօն հաւատք են:

Այն ողջամիտ անձն կներէ իրան ուրանալ Հայոց ծիսական եւ թեմական գպրոցների՝ Հայ ազգին հասուցած օգուտները, ի նկատի առնելով այն նիւթական եւ բարոյական նեղ եւ անձուկ շրջանը, որով նոքա գոյութիւն են ստացել եւ պահպանուել

Օրինակ: Մի՞թէ այսօրուան օրս Հայ ծխական եւ թեմական դպրոցներում ուսած սակաւ եկեղեցականք կան, որոնք վայելում են Հոգ. Իշխանութեան եւ Հայ Ժողովրդի արժանաւոր համակրութիւնը իւրեանց՝ ի մանկութենէ հետէ հայ եկեղեցուն մատուցած ամբասիր ծառայութեանը համար: Եթէ սոքա եւս չլինէին, ցանկալի է խմանալ՝ ո՞րք կ'իփօխարինէին սոցա. այլ-այլ բարձրակարգ ուսումնարաններում ու համալսարաններում ուսումնաւարանները: Մի՞թէ Հայ ծխական եւ թեմական դպրոցներում ուսած եւ ինքնակրթութեամբ զարգացած սակաւ աստիճանաւորներ կան, որոնք այսօրուան օրս թէ՛ քաղաքական եւ թէ՛ Հոգեւոր Առեաններում պատուաւոր պաշտօններ են կատարում: հայ անուան արժանաւոր հաւատարմութեամբ եւ յառաջադիմութեամբ, քան շատ մի այլ-այլ բարձրակարգ ուսումնարաններում ուսումնաւարանները: Քանի՞ քանի՞ մեծ ու փոքր հայ վաճառականներ ու արհեստաւորներ կարելի է ցոյց տալ, որոնք հայ ծխական եւ թեմական դպրոցներում ուսած գրել կարգալուր կարողացել եւ կարողանում են իւրեանց գործերը այնչափ յաջողութեամբ յառաջ մղել, որչափ այլ-այլ բարձրակարգ ուսումնարաններում ուսումնաւարանները. եւ վերջապէս Հայոց ծխական եւ թեմական դպրոցները չէ՞ին, որ Ժողովրդի բերաններում կենդանի պահեցին մեր մայրենի լեզուն եւ նորանով գրելն ու կարգալը: Նոյն ինքն Մշակի խմբագիր պ. Գ. Արծրունին չէ՞ր, որ կրկնում էր թէ՛ իւր լրագրի ընթերցողաց ամբողջութիւնը կազմում են գաւառացիները (Հայոց ծխական եւ թեմական դպրոցներում ուսումնաւարանները) եւ ո՞չ համալսարանականները:

Բայց դեռ մօտ անցեալում գտնուեցան անձինք եւ այն՝ ալ-Քային լո-ո-ո-ո-ո-ո-նէան Գործիչ համարուածներէից, որոնք թոյլ տուին իրանց՝ լրագրութեանց միջոցաւ մի շարք յօդուածներով Հայոց ծխական եւ թեմական դպրոցները հայ Ժողովրդին անօգուտ ներկայացնել եւ պարգամիտ հայ Ժողովուրդը գայթակղեցնել նոյն դպրոցների վերաբերութեամբ, այլ-այլ ուսումնարանների դռներ մատնացոյց առնելով նոցա: Գոգցես Մշակի խմբագիր պ. Գ. Արծրունուն եւս այսպիսի մի առիթ էր հարկաւոր. նա անմիջապէս ամենաջերմ վէպ և պաշտպան հանդիսացաւ նոցա այն անհեթեթ մտքին եւ սկսաւ արձագանք ու տե-

դի տալ նոցա իւր թերթի էջերում. « Կանոնադրէ շահան ո՛վ է. — Գլխիդ »՝ ասումէ ժողովրդական առածը: Ինչպէս յիշեալ յօդուածագրները, նոյնպէս եւ պ. Գ. Արծրունին չհասաւ ի հարկէ իւր նպատակին. որովհետեւ ճշմարտութիւնը, որին հակառակել էր կամենում, ակներեւ եւ անյաղթելի էր, բայց եւ այնպէս նա իւր սրտի սեւ մուկը թափեց, եւ կարելի՛ է կարծել, որ իւր բնածին և հա՛մ մը որ և է պարպաւորութիւնը հաւատեց:

Այդ բաւական չէր, մի նոյնպիսի անհեթեթ եւ մաղձոտ միտք եւս կարգացինք Մշակի 42 համարի « ՀԱՅ ԿԻՆՐ » վերնագրով պ. Գ.Ա. ի ստորագրած յօդուածում, որի մէջ խօսելով Տէրիւն հանանց Բարեգործական ընկերութեան մասին, խորհուրդ է տալիս ընկերութեանը « Վարձացնել այնպէս եւ Բարձրել, Բայց Վարձաւորութեամբ հայ խփական Կարգիւնները և լռելի Զոյգ, այլ օրհորհրդեր ուղարկել արդարաւանջ հա՛մ Ուսումնարանի մայրաքաղաքները զանազան մասնագիտութեանց մէջ պարպաւորութեամբ հայ խփական Կարգիւններէ համար: Թէ՛ մեր երկսեռ գպրոցները երբեմն եւ տեղ տեղ յատ են կառավարուած եղել եւ թէ՛ այժմ իսկ նոքա*) այն կատարեալ արգիւնաւոր եւ ժամանակիս եւ մեր պահանջմանց բոլորովին համապատասխան դրութիւնն ու վիճակը չունին, այդ խոստովանումները եւ մենք, խոստովանումները նոյնպէս, որ մեր գպրոցների անհրաժեշտ եւ գլխաւոր պէտքն է մասնագէտ ուսուցիչը եւ ուսուցչուհիք. բայց մի ողջամիտ եւ հայ գպրոցներին ճշմարիտ բարեկամ անձն թոյլ կտայ իրան՝ խորհուրդ տալ հասարակութեանը Վարձացնել Վարձաւորութեամբ հայ խփական Կարգիւնները, հետեւաբար լռելի Զոյգիւն Զեյնիյանս ունեցած մեր Կարգիւններէն մինչև Զոյգ համար մասնագէտ ուսուցիչներ պարպաւորելը: Ո՛չ ապաքէն, որքան որ մեր այս գպրոցները անբաւականացուցիչ լինէին, այնու ամենայնիւ եւ այնպէս չեն, ինչպէս էին սորանից տասնեակ տարիներ յառաջ. նոցանից իւրաքանչիւրը հետ զհետէ բարւոքուած է իւր նիւթականի համեմատ, եւ անշուշտ եմք թէ՛ հետ զհետէ աւելի կրարւոքուին, բայց ումնով եւ ինչով

(*) Հաստատ կարելի է յաւելուլ և անդիւ որ « Զ — Զոյգիւն » գպրոցներն ևս մինչև անգամ բազմատեսակ և խորին քննադատութեան . . . կկարօտին՝ երբ մանաւանդ նոցա նիւթական վիճակները և անհիշատակ անհաշուութեամբ են:

կարող են բարեքրուիլ ներկայումս ունեցած մեր գպրոցները, եթէ օգնեն նոցա թէ՛ հասարակութիւնը՝ թէ՛ մասնաւոր անձինք եւ թէ՛ այլեւայլ ընկերութիւնք, որպիսեաց կարգից է Տփլիսու Կանանց Բարեգործական ընկերութիւնը: Ա՛ր երկրում, ո՛ր հասարակական հաստատութիւնը իւր կատարելագործուած դրութեանը չէ հասել հետ զհետէ, այսօրուայ կատարելագործութիւնը վաղը մի այլ կատարելագործող կերպարանափոխութիւն է պահանջում. սա բնական է. բնական օրինաց մէջ ստիւն չէ լինում:

Իսկ ինչ վերաբերումէ հայ իշխան Դպրոցներէ Բաղամի- լին- լան, ինչպէս պ. Գ. Արծրունին է գրում, պէտքէ ասել, որ ընդհակառակն նոքա այնքան սակաւաթիւ են՝ որ մատուց կարելի է հաշուել, եւ հետեւաբար նոքա հայ իգական մանուկների հարիւրերորդական մասին անգամ անբաւական են դրել կարգաւ ուսուցանելու: Ա՛ւր թողումք որ մեր—Հայոց իսկական պարտքն է Հայ իգական սեռը կրթել եւ դաստիարակել՝ եւ ոչ թէ ծանրութիւն եւ պարտ թողուլ ոչ—հայկական գպրոցաց՝ որք տարբեր ուղղութեամբ ամեն կողմ՝ բազմաճառոյ վերայ են:

Եթէ ասէր պ. Մշակը թէ՛ անհրաժեշտ է լաւ կառավարած Դպրոցաց վերայ աւելի ուղարկել Դպրոցներ և օգնել, բարի եւ անհիղձ նպատակ կհամարէինք եւ կգովէինք առանց երբէք գայթակղելոյ՝ երբ մասնաւոր գայթակղութեան այնքան առիթներ տուած է պ. Մշակ՝ որ մեզ ստիպած է իւր ամեն գրուածոց վերայ շատ անգամ կասկածիլ եւ գայթակղիլ:

Մենք քաջայայտ եմք, որ Տփլիսու Կանանց Բարեգործական ընկերութիւնը այնքան ողջամիտ եւ ճշմարիտ բարեկամ է Հայ իգական գպրոցներին, որ քաջ համոզուած լինելով թէ՛ մասնագէտ ուսուցչուհիք պատրաստելու՝ եւ թէ՛ ներկայումս եղած իգական գպրոցներին բարոյապէս եւ նիւթապէս օգնելու կարեւորութեան մէջ, ոչ մինին եւ ոչ միւսին կիմնայէ իւր ձեռնհաս օժանդակութիւնը իւրովսանն ջանալով միանգամայն հայ իգական աղգ. հոգ. գպրոցաց թիւը տակաւ առ տակաւ բազմապատկել: